

ԳԵՎՈՐԳ ԶԱՅԱՆԱ ՄԿՐՏՈՒՅԱՆՑԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Աստրախանի հայկական թեմում (Ղզլար և Աստրախան) գրական, հրապարակախոսական, մանկավարժական, հասարակական, քաղաքական գործունեությամբ հայտնի դարձած Գևորգ քահանա Մկրտումյանը (1863 - Ղզլար - 9.05.1915 - Ալեքսանդրապոլ) նամակագրական սերտ կապերի մեջ է եղել ժամանակի հայ գրողների, խմբագիրների, մշակույթի այլևայլ գործիչների հետ: Աշխատակցելով Աստրախանում լույս տեսնող «Լրաբեր» շաբաթաթերթին (1908-1909)՝ նա հաղորդակցվել է հայ, ռուս և արևմտասլավոնական գրական ու քաղաքական աշխարհի նորություններին, հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին և տպագիր հոդվածներով ու նամակներով արտահայտել իր կարծիքները, հետագա ծրագրերը հարազատ ժողովրդի առջև ծառայած իրատապ խնդիրների լուծման ուղղությամբ:

Վերջերս Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում Գևորգ քահանա Մկրտումյանցի անձնական արխիվը ուսումնասիրելիս հայտնաբերել ենք նրա անտիպ նամակները՝ ուղղված բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանին, որի նկատմամբ նա տածել է ջերմ համակրանք ու սեր: Գ. քահ. Մկրտումյանցի յուրաքանչյուր նամակ լի է զնահատանքի խոսքերով: Ալ. Ծատուրյանին նա համարել է «Փնուտ և տաղանդավոր արվեստագետ»: Ընդհանրապես բանաստեղծի գրական հոբելյանի առթիվ ուղարկած նամակում գրել է. «Անկեղծ ասես, քո քնարը արժանի էր այդ մեծարանքին, և թող այն այսուհետև ավելի ուժգին հնչեցնե իր գեղզեղանքները»:

Գ. քահ. Մկրտումյանը իր մի շարք նամակներում դժգոհում է աստրախանահայ հետադեմ մտավորականներից, որոնք, փոխանակ խրախուսելու և ոգևորելու հայրենանվեր գործչին, խանգարում էին, խոչընդոտում իր ազգանպաստ գործերին: Ուստի նա խնդրում էր բանաստեղծին դուրս բերել իրեն այդ ճղճիմ միջավայրից և օգնել տեղափոխվելու Մոսկվա, ուր լուսավորական ու կրթական, գրական գործունեության համար կարող էր գտնել բարենպաստ պայմաններ:

Ալ. Ծատուրյանին գրած նրա նամակները միաժամանակ պատկերացում են տալիս Գ. քահ. Մկրտումյանցի գեղագիտական հայացքների, գրական ճաշակի, ինչպես և իր ժողովրդի կյանքի ու նրա հետագա ճակատագրի վերաբերյալ ունեցած մտորումների, ապրումների, արևմտահայության ազատագրման շուրջ նրա մշակած ծրագրերի մասին:

Գ. քահ. Մկրտումյանցի նամակներից մեկը հասցեագրված է բանաստեղծի տիկնոջը՝ Հույս Ստեփաննոսյանին, որին խնդրում է հիվանդության պահին ավելի հոգատար լինել բանաստեղծի նկատմամբ: Նրա նամակներում սփռված ջերմ ու անկեղծ խոսքերը, որ վկայում են Ալ. Ծատուրյանի նկատմամբ ունեցած սիրտ մասին, այսօր կարող են և՛ դաստիարակչական, և՛ ուսուցողական, և՛ ճանաչողական օրինակ լինել: Բացի դրանից՝ այս նամակների առաջին անգամ լույս ընծայումը կարող է առիթ դառնալ պատասխան նամակների հայտնաբերման համար:

Ստորև ներկայացվող Գևորգ քահ. Մկրտումյանցի 13 անտիպ նամակները՝ տպագրում ենք առանց լեզվաոճական և ուղղագրական միջամտությունների:

Հ. Գ. ԶԱՔԱՐՅԱՆ

¹ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գևորգ քահանա Մկրտումյանցի ֆոնդ, թիվ 347-358 և թիվ 652:

1. ԱԼ. ԾԱՏՈՒԹԱՆԻՆ

14 մայիսի 1899 թ.
Աստրախան

ՅԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ Պ. ԱՂԵԶՍԱՆԴՐ ԾԱՏՈՒԹԱՆ

Ամենայն հաճութեամբ ստացայ և վաճառեցի Ձեր բանաստեղծութիւնները 25 օր. որոնցից գոյացած գումարը ահա տոյն նամակիս հետ յանձնում եմ պ. Ա. Պօղոսեան մեր ընդհանուր բարեկամին հասցնելու Ձեզ անձամբ: Ձեր կարգադրութեան համաձայն մի օրինակ յանձնեցի Գերապատիւ Արիստակէս արքեպիսկոպոսին, իսկ միւս օրինակը շնորհակալութեամբ ստացայ ես:

Գիրքը կարդացում է հետաքրքրութեամբ և հաճելի տպաւորութիւն է գործում, մանաւանդ մի քանիսը և առհասարակ ծովին նւիրած երգերը: Յանկանալով Ձեր գրիչը աւելի բեղմնաւորած տեսնել և Ձեր երիտասարդական աւիւնը աւելի վառ, մնամ Ձեզ համար պատրաստական Գ. քահ. Մկրտումեանց:

Յ. Գ. Գումարի ստացման մասին խնդրեմ միամտացնել իճձ մի երկտողով:

2. ԱԼ. ԾԱՏՈՒԹԱՆԻՆ

24 ապրիլի 1900 թ.
Աստրախան

ՅԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ Պ. ԱՂԵԶՍԱՆԴՐ

Ստացայ կարևոր նամակդ: Քո առաջ խիստ մեղաւոր եմ իմ լռութիւնովս: Հեռագիրդ, նամակդ իր ժամանակին ստացել եմ «Լրաբեր»-ի վերաբերեալ, բայց անպատասխան թողնելուս ամենայարգելի պատճառն այն էր, որ վերջնականապէս որոշւած չէր լրագրի դադարեցնելը. ընկերներս էլ այնքան անտարբեր էին, որ չէին ժողովում վերջնականապէս հարցը որոշելու, ուստի սրա համար էլ չկարողացայ քեզ մի վճռական պատասխան գրել, և որովհետև այդ խնդիրը ուշացաւ, այս պատճառով էլ հնացած համարեցի քեզ գրել: Երևի կհասկանաս դրութիւնս «Լրաբեր»-ը փակվելու առիթով և միանգամայն ներողամիտ կլինես: Առ այժմ այդքան. երևի մի այլ անգամ կդառնամ այդ հարցին, այժմ դառնանք քո առաջարկութեանը: Բարեկամ, շատ շատ մտածեցի, շատերին էլ փակ կերպով հարցրի, սակայն ոչ ոք սրտով չդիպաւ հարցին, մնաց, որ ես միայնակ որոշէի խնդիրը և քեզ գրէի: Իմ կարծիքով մեր հասարակութեան համար անհրաժեշտ հաստատութիւնը աշխատանքի տունն է: Աշխատանքի տուն, որ կարելի լինէր ամեն մի անգործի նախքան գործ գտնելը, աշխատանք տրւէր: Բացի աշխատանք տալուց, այդտեղ և գործ, արհեստ, պարապմունք սովորէին: Իսկ այդպիսի արհեստ և գործ կարելի էր աշխատանքի տանն ուսուցանել-գորգագործութիւն, տնայնագործութիւն, խոհարարութիւն, կարտոնաժի արհեստը, լրացարարութեան գործը իր բոլոր պարագաներով: Աշխատանքի տունը, կարծում եմ, նաև գործի դուռ կբանար զլիսաւորապէս մեր այն նոր օրիորդների համար, որոնք արթնել են, սակայն ոչ մի

գործ չկայ, որ զբաղեն, միայն տան անկիւններում թախծում են, ախուվախ անում և կեանքից հիասթափւած՝ անգործութեան ու փուչութեան անձնատուր լինում: Աշխատանքի տան մասին մանրամասն գրելը ժամավաճառութիւն են համարում, հանդուած են, որ դու աւելի ծանօթ ես, մանաւանդ, որ Մոսկւայի **աշխատանքի տունը** Ռուսաստանի մէջ առաջինն է, իսկ եթէ անւանած է բարերարը այդ բոլորի էութիւնը չի հասկանայ, կարող ես նրան անձամբ տանել այդ տները և ծանօթացնել և կամ նրանց ծրագիրները ձեռք բերել և բարերարին հասկացնել: Ես կարծում եմ, որ աշխատանքի տուն բանալու գաղափարը նրա խելքին աւելի մօտ կերևայ, քանի որ գրում ես թէ՛ ինքը ցանկանում է արհեստագիտական մի հաստատութիւն բանալ Աստրախանում: Այդ բարերար Ջանումեանին հասկացրու, որ **աշխատանքի տունը** իր խելքին մօտ բան է, և եթէ ինքը արհեստագիտական հաստատութիւն կհիմնէր, աշխատանքի տունը մեր հայ համայնքին կտա մի քանի արհեստների ուսում ու գիտութիւն: Եւ եթէ այդ միտքը նստեց նրա գլխում և մի հրաշքով որոշեց իր կտակը գրել, և ես յոռետեսօրէն եմ վերաբերում, անպատճառ կտակի մէջ գրել տուր, որ այդ **աշխատանքի տան** դռները բաց լինեն բոլոր հայերի համար անխտիր, թէ եկորների և թէ տեղացիների: Այդ կէտը նրա համար եմ շեշտում՝ հաշտարխանցիները սովոր են ապրել միայն հաշտարխանցիների համար. դրան ապացոյց կարող է ծառայել մեր Աղքատաց հոգաբարձութիւնը, որը իր 1/2 միլիօնանոց դրամագլխով հոգում է միայն հաշտարխանցիների կարիքները, որովհետև իր անմիտ կանոնադրութեան կէտերից մէկը այդպէս է պահանջում:

Երկրորդ՝ ի սէր Աստուծոյ աշխատիր, որ Ջանումեանի կտակի գործադրութիւնը չյանձնէի մեր տեղական վերոյիշեալ Աղքատաց հոգաբարձութեանը, այլ մի ուրիշ կազմ ընտրի, որպէսզի **աշխատանքի տան** գործը կանոնաւոր կերպով առաջ տանի:

Եթէ աշխատանքի տան գաղափարի հետ նա չի հաշտուի, այն ժամանակ, ճարահատեալ, կառաջարկէի մի **հայկական մանկական պարտէզ բանալ**, ուր չքատրների երեխաները ծրի, իսկ հարուստներինը չափատր վարձով ընդունւէին: Այդ առաջարկութեանս գլխատր պատճառն այն է, որ տարրական ուսումնարաններ չունենալու պատճառով հայ լեզուն բոլորովին կորչում է և մեր նոր սերունդը բոլորովին օտարանում է: Գոնէ 4-7 տարեկան երեխաները մուտք գործելով մի այսպիսի գոտի հայ մանկական պարտէզ, միջոց կունենային՝ ոչ ուսումնարանական հասակում խօսակցութեան, խաղերի, երգերի միջոցով ընտելանալ հայկական բարբառի հետ, որը և առիթ կտար բոլորովին չկորցնել իրենց սեփական լեզուն և դրա հետ կապ ունեցող զգացումներն ու յատկութիւնները: Ահա՛ իմ երկու առաջարկութիւններս ևս քո առաջ են դնում, երկուսն էլ մեր տեղական հայերի համար կարևոր են, որչափ ոյժ, կարողութիւն ու եռանդ ունիս, մէկն ու մէկը յաջողեցրու, որի համար մեր հասարակութեան հասկացող մասը սրտանց գոհունակութիւն կյայտնի քեզ:

Այժմ գանք քո յօբելեանին, որի մասին առանձին բաւականութեամբ տեղեկացայ:

Թէ ինչո՞ւ ինձ առանձնապէս դիմում չեղաւ մասնաժողովի կողմից, ես բացատրեցի նրանով, որ ասացի, երևի միայն հաստատութիւններին են դիմել, թէև այդ հաստատութիւնների մէջ մոռացւած է մեր հայ գրական գեղարվեստական ընկերութիւնը, որի նախագահը լինելու պատիւն ունեմ, բայց երբ մասնաւոր մարդիկ - Ալաջալեան, Աւագեան - Կոսիկեանից դիմումներ ստացան, ես զարմացայ: Բայց և այնպէս այդ խնդրում ձեռնպահ չմնացի, մանաւանդ որ երկուսն էլ իրենց նամակները ինձ մօտ բերեցին: Հաւաքեցանք Ա. Աւագեանի մօտ մի 10-12 անձ, վերջինիս հրաւիրանքով, ու որոշումն արինք ժողովարարութիւն անել և այդ քանի

համար ընտրեցինք մենք երկուսս. սակայն ի՞նչ հետևանք գտայ, այդ ցոյց կտայ ապագան, մանաւանդ որ հայկական անտարբերութիւնը իր մեռցնող թաթը դրել է ամեն տեղ: Գրանով էլ չբաւականացայ, գրական գեղարվեստական ընկերութեան մէջ կազմակերպեցի մի գրական երեկոյթ յատկապէս քեզ ուխտած, որ տեղի կունենայ վաղը երեկոյեան, ապրիլի 27-ին: Մեր նպատակն է այդ երեկոյթի միջոցով «սիրոյ ու վշտի երգչիդ» ծանօթացնել մեր հասարակութեանը: Ինձ է վիճակել մի համառօտ ակնարկի միջոցով քննադատել և գնահատել քեզ: Թէև շատ դժար գործ եմ յանձն առել՝ քեզ հարցաքննել ու թանջան դնել, բայց յոյս ունիմ իմ քննական թանջանից չես վախենայ և չես կասկածի նրա չափի մասին, երբ իմ բոլոր համակրանքը քո կողմն է:

Բացի դրանից՝ յօրելեանիդ առիթով մի ռտանատր եմ գրել և ուղարկել մասնաժողովին, խնդրելով անպատճառ կարդալ քեզ գնահատման և մրցանակաբաշխման օրը՝ մայիսի 2-ին: Եթէ յարմար կդատես, կողմնակի կերպով աջակցիր, որ մի սրտանց բարեկամիդ հոգեբուղխ խօսքն ևս քո ստացած դափնիներից մէկի տերևը լինի քո երջանիկ օրին: Եթէ անյարմար կդատես, այն ժամանակ թող մասնաժողովը իր հասկացածով առաջնորդի՝ ընդունի կամ չընդունի: Թէև ես անձամբ համոզուած եմ, որ վերջինը կլինի, բայց ընդունելու դէպքում, ցանկալի էր, լաւ կարդացողի յանձնէր:

Գուցէ հարցնես, թէ ինչո՞ւ եմ համոզուած, որ չի ընդունի, այդ հետևցնում եմ նրանից, որ մենք փոքր, աննշան գրողներ ենք, երկրորդ՝ գնահատութիւնը տրուած է մասնաժողովին, մասամբ անձանօթ մեր երկրորդական գրողներիս արեստին և երրորդ՝ այդ փաստը տեց «Գարուն» այժմանախը: Արդէն կարդացի դրան մասնակցողների անանացանկը և ես նրանց մէջ չէի, թէև մի երկու, երեք կտոր բան էի ուղարկել: Եւ ցաւալին այն է, որ խմբագրութիւնը այդ կերպ է ուզում իր շուրջը գրողներ խմբել: Այո՛, հասկանալի է, անպատճառ պետք է Իսահակեան, Տերեան, Կուրդիեան լինել, տեղ գտնելու համար, սրանցից դուրս էլ աշխատող, գրող չկայ:

Լաւ կաներ խմբագրութիւնը, ապրելով Ռուսաստանի գրական սրտում, ուսաներ, թէ ինչպէս սկսնակ, միջակ և մեծ գրողները ըստ արժանոյն գնահատուում են և առաջ են քաշուում: Հենց դրա համար է, որ մենք գրականագէտներ ու աշխատողներ չունենք և չենք էլ ուզում ունենալ ու արժանատրութիւններ նշմարել: Ուղիղն ասած, «Գարուն»-ի վրայ մեծ յոյս ունէի. կարծում էի թէ տեղի և թէ հանգամանքների յաջողութեամբ աւելի մուտք կունենանք, սակայն մեզում ասում են, «Խիարը ծուրը բուսավ, մախլաս», գլուխդ ցաւեցրի, բայց այնուամենայնիւ այդպիսի վերաբերմունքը վիրատրական է:

Մի խնդիր ունեմ, յոյս ունեմ անկատար չես թողնի. նախ՝ վերադիր վճարով ինձ համար ուղարկիր Գ. Խալաթեանի ուսումնասիրութիւնը հայոց նոր պատմութեան մասին և երկրորդ որտեղի՞ց ճարել քո «Այ վարդի» նոտաները միայն բարձր ձայնի համար գրած: Եթէ այդտեղ Մոսկւայում կայ, խնդրում եմ նոյնպէս վերադիր վճարով ուղարկել երկու օրինակ:

Այնուհետև իմ անհամար և սրտանց շնորհատրանքները ընդունիլ յօրելեանիդ առիթով: Թող քո անոյշ քնարը դեռ ևս շատ ու շատ տարիներ լսելի լինի մեր քար անտարբերութիւնը մաշելու և քո անմման մուսան նորանոր թոխչքներ անի բա՛րձր, բա՛րձր, հայ ստրուկ նախիրը դէպի վեր «յատակ»ից բարձրացնելու: Իմ անկեղծ յարգանքները յօրելեանիդ շէմքին:

Մնամ քո Գեորգ բահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ

3. ԱԼ. ԾԱՏՈՒԹՅԱՆԻՆ

17 սեպտեմբերի 1902 թ.
Աստրախան

ՅԱՐԳԵԼԻ Պ. ԱՂԵԶՍԱՆՐԻ

Աստրախանի իմ ծանօթ օրիորդներից մեկը՝ Հաւատ Գրիգորեան Պապովեանցը ներկայումս գտնուում է Մոսկւայում և ատամնաբուժութիւն է ուսանում: Օրիորդի ցանկութիւնն է՝ Մոսկւայում ունենալ այնպիսի ծանօթներ, որոնք կարող լինէին նպաստել իրան՝ հայ լեզւի մէջ վարժելու, հայ ներկայ կեանքին, գրականութեանը ծանօթացնելու և այլն. ուստի և ես առաջարկեցի՝ դիմել Ձեզ և Ձեր մէջ գտնել իր ցանկացած առաջնորդին: Պէտք է ասել, օրիորդը, թէև աստրախանցի, բայց ամաչկոտ է և անվստահ: Ես նրան տուել եմ Ձեր հասցէն, երբ Ձեզ դիմելու լինի, խնդրեմ չզլանաք և յոյս ունեն, չէք զլանայ Ձեր ծառայութիւնը մատուցանել նրան հետաքրքրող հարցում: Գլխատրը նրանումն է, որ ինքն է դիմողը, իրա մէջ է առաջացել հայանալու ցանկութիւնը, ուրեմն և հաճելի էլ կլինի Ձեզ համար մի այդպիսի անձնատրութեանը առաջ քաշել: Շատ ցանկալի կլինէր, եթէ ծանօթացնէիք օրիորդին Արուշանեան ընտանիքի հետ. կարծում եմ, որ տիկ. Վարդուհու շրջանում օրիորդը կարող կլինէր վարժել հայ լեզւի մէջ:

Ներկայ ամսիս, կարծեմ, սկիզբներում Ձեզ ուղարկեցի իմ նոր թարգմանութիւնը «Աղէքսանդր Գավվաջի և իր քարոզները». յոյս ունեմ ստացած կլինէք: Նոյնպէս ուղարկել էի Արուշանեանին, մինչև անգամ մի 15 օրինակ էլ վաճառելու չգիտեմ, ստացե՞լ է, թէ՞ ոչ: Բերողը օր. Հռիփս. Իզմիրեանն էր:

Առ այժմ այսքանս. խնդրում եմ ողջունել Արուշանեանին:

Մնամ առ Ձեզ ամ. յարգանքով Գեորգ քահանայ ՄԿՐՏՈՒՄԵԱՆՅ

4. ԱԼ. ԾԱՏՈՒԹՅԱՆԻՆ

2 յունարի 1908 թ.
Աստրախան

ՄԻՐԵԼԻ ԱՂԵԶՍԱՆՐԻ

Նախ՝ շնորհատրում եմ նոր տարեմուտը, ցանկանում եմ նոր եռանդ, նոր ներշնչումն նորանոր և քաղցր ելեւջնեբով հնչեցնելու քնարիդ մեղեդիները: Երկբորդ. շնորհակալութիւնս եմ յայտնում հեռագրիդ համար, որով իր ժամանակին իմաց տուիր մեր թանկագին Շահագիզի մահը: Այդ բովանդակութեամբ հեռագիր ստացել էր և մեր կոնսիստորիայի նախանդամ Ներսէս վարդապետը Բարխուդարեանից: Վարդապետի հետ միասին խորհրդակցեցինք, որ հեռագրի բովանդակութեան մասին խօսի այդ գիշերուան ծխական ժողովում և որոշեցինք, որ առաջարկի ընտրել քեզ ներկայացուցիչ: Վարդապետը իսկոյն կանչեց ժողովը բացող քահանային և այդ բոլորի մասին հաղորդեց նրան և մինչև անգամ քո հեռագիրն էլ յանձնեցինք քահանային: Ես այդ գիշեր ծխական ժողովում լինել չէի կարող, որովհետև առաջուց տոմսակ ունէի վերցրած որդուս թատրոն առաջնորդելու: Միս

առաւօտ տեղեկանում են, որ 23 անձից բաղկացած ծխական ժողովը հասարակութեան կողմից ներկայացուցիչ է ընտրել Բարխուդարեանին: Այդ ինձ շատ զայրացրեց, որովհետև բանից երևաց, որ վարդապետը ինձ հետ խորհրդակցելուց յետ, նորից կանչել է քահանային և ժողովի առաջ կարդալու համար իր (Բարխուդարից ստացած) հեռագիրն է տւել, սրա համար էլ փոխանակ քեզ ընտրելու, Բարխուդարեանին են ընտրել: Վարդապետի այդ միտումնաւոր վարմունքը ինձ ստիպեց քեզ էլ դիրք տալու հանգուցեալի դագաղի մօտ, թէև չեմ կասկածում, այդ տեղը դու կունենայիր և իրաւունք էլ ունես ունենալու, ուստի մեր կանանց ընկերութեանը համոզեցի և քեզ իրանց ներկայացուցիչ ընտրեցին թաղման ժամանակ, որպիսի առիթով և հեռագրեցին քեզ 28-ի գիշերը: Դրանով էլ չբաւականացայ, ժողովեցի մի 20 թէ 21 մարդ և բոլորիս ստորագրութեամբ քո սեպուի հասցեով (Շորշորովի գրասենեակի անւամբ) հեռագրեցի քեզ, որ մեր ներկայացուցիչը լինես Շահազիզի թաղմանը և կենդանի ծաղիկներիցն էլ մի պսակ դնես 25 ռ. արժողութեամբ, այս հեռագիրը քաշեցի դարձեալ 28-ի գիշերը: Իսկ 29-ի առաւօտ շատ քաջ հեռագրով փոխադրեցի 25 ռուբլին: Կիրակի օրը՝ դեկտեմբերի 30-ին, երբ պատրաստուում էի եկեղեցում Շահազիզի հոգեհանգստին խօսք ասել, յանկարծ հեռագրատան ծառայողը ինձ կանչում է դուրս և հաղորդում է, որ պսակի փողը քեզ չէ հասցրած հասցեատիրոջը չգտնելու պատճառով և նոր հասցէ է պահանջում: Այդ դէպքը շատ վատ ազդեց վրաս, մնացի շարած, ի՞նչ անել, արդէն ուշ էր, ուղղել անկարելի էր. միայն երեկ նորից քեզ հեռագրեցի, եթէ պսակ չես դրել, փողը փոստից ստացիր և յետ ուղարկի և որովհետև կասկածում են, որ այդ հեռագիրն էլ չի հասնի, ուստի այս նամակս գրում են յարգելի տիկնոջ հասցեով. փողը ստանալուդ պէս իսկոյն յետ ուղարկիր, որովհետև գումարի վերաբերեալ այլ որոշում ենք արել: Չարմանում են, մի՞թէ Շորշորեանի կանտորը այնքան աննշան բան է, որ Մոսկւայում գտնել չեն կարողանում, իսկ հասցէի մէջ չէի կարող սխալւել, որովհետև քո այս տարւայ տւած հասցեով են ուղարկել: Չեմ հասկանում, երկի մի բան կայ այդ հասցէի վերաբերեալ, որովհետև քեզանից խաչը ստանալուց յետ, նամակով շնորհակալութիւնս էի յայտնել և խնդրել էի, որ քո վերջին հրատարակութիւնիցդ 15 օրինակ ուղարկես, սակայն մինչև օրս քեզմից ոչինչ չեմ ստացել, երբ այդ էլ յիշեցի, սկսեցի կասկածել Շորշորովի անունով տւածդ հասցէի վերաբերեալ: Այժմ եղածն անցել է, միայն դէպք եղածին պէս ձեր շրջաններում յայտնիր, որ դու ընտրւած ես եղել ներկայացուցիչ կանանց ընկերութեան և մի խումբ համակրողների կողմից, միայն հանգամանքների շնորհիւ հեռագիրները տեղ չէն հասել: Մէկ էլ մտածում են, գուցէ հեռագիրներն հասել են քեզ, բայց փողը չէ հասել: Ահ, շատ ուրախ կլինէի, եթէ այդպէս լինէր, յոյս ունեմ, մի տեղից կզըտնէիր պսակի փողը, իսկ եթէ այդպէս չի եղել, շատ և շատ ափսոսում են, որովհետև այդ բոլորը գլուխ բերելու համար շատ շատ են չարչարուել. ինչևիցէ:

Իմ յարգանաց հաւաստիքը ազնիւ տիկնոջը և սիրասուն օրիորդին: Գրիր մանրամասնութիւններ հանգուցեալի վերջին թույլների մասին և թէ ինչպէս վերաբերեց Մոսկւայի հայ գաղութը: Մեզնում առանձին նորութիւններ չկան:

Մնամ անչափ յարգանքով Գ. քահ. ՄԱՐՏՈՒՄԵԱՆՅ

ԱԼ. ԾԱՏՈՒՅԱՆԻՆ

8 յունարի 1908 թ.
Աստրախան

ՄԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ ԱՂԷՔՍԱՆԴՐ

Արդէն ժողովրդականութիւն ստացած և սիրած բանաստեղծիդ ուղարկում եմ ոտանաւոր գրածքներիս առաջին և փոքրիկ ժողովածուն «Ըմբոստ երգեր» վերնագրով: Յանկալի է ինձ լսել քո խիստ և անկեղծ կարծիքը գրքոյկիս մասին, ոչ թէ միայն մասնատրապէս, այլ մինչև անգամ հրապարակով, եթէ իհարկէ ժամանակդ կնքերի և ուշադրութեանդ կարժանանայ: Դեռ ևս միայն «Վտակ»-ն է մի փոքր գրախօսական գրել գրքոյկիս մասին և այն էլ խիստ աննպաստ: Բայց ես կուզէի անկախ և անկուսակցական մարդու ազատ և անկեղծ կարծիքը լսել այդպիսի մի անձ քեզ եմ ճանաչում, յոյս ունիմ չես զլանայ, գոնէ մի քանի խօսք ինձ կգրես: Անաչառ կրիտիկայի բացակայութեան պատճառով շատ գրողներ դեռ չծլած թառամում են և շատերն էլ մոլախոտերի նման ծածկում են մեր խոպան գրական հրապարակը. այդ երկսից ո՞ր շարքին եմ ես պատկանում, կսպասեմ լսել քեզնից:

Վերջին օրերս Շահագիզի մահուան առիթով մի քանի հեռագիր և մի ապահոված նամակ գրեցի քեզ. սպասում եմ դրանց պատասխանին անհամբեր:

Քեզ անչափ յարգող Գ. քահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՅ

Յ.Գ. Ռ՞մ կարելի է Մոսկվայում յանձնել մի քանի օրինակ վաճառելու:

6. ԱԼ. ԾԱՏՈՒՅԱՆԻՆ

18 փետրարի 1908 թ.
Աստրախան

ՄԻՐԵԼԻ ԱՂԷՔՍԱՆԴՐ

Ստացայ նամակդ. շնորհակալութիւն կրածդ նեղութիւնների համար, որ պատճառեցինք մեր յանձնարարութեամբ: Շնորհակալութիւն նոյնպէս Շահագիզի մահուան և թաղման մանրամասնութիւնները հաղորդելու առիթով: Գրել էիր նոյնպէս, որ «Գրիչս ցած չդնեն»: Նախ գրիչս այնպիսիներից չէ, որ նրան ցած դնելն ու շարժելը ուշ դարձնի և երկրորդ, որ վայր չեմ դրել, դրա ապացոյց՝ քեզ նւեր էի ուղարկել երգերիս մի փոքր, աննշան ժողովածուն և խնդրել էի որպէս հմուտ և տաղանդաւոր արւեստակցի, յայտնել կարծիքդ. սակայն ամսից աւելի է, որ քեզնից ոչինչ չեմ ստանում, արդեօ՞ք ստացել ես գրքոյկը, թէ փոստում կորել է, շատ հետաքրքիր է: Առ այժմ այդ բոլորը մի կողմ թողնենք, շտապում եմ առ քեզ մի նոր և կարևոր խնդրով, յոյս ունեմ անուշադիր և անկատար չես թողնի. ահա քանի էութիւնը:

Միրելի Աղէքսանդր, մի քանի ընկերներ մի շատ յանդուգն գործ ենք ձեռնարկել, այն է - Աստրախանում մի հայ շաբաթաթերթ հրատարակել և այս երկու օրը արդէն նահանգապետից թոյլտութիւնը ստացանք: Շաբաթաթերթի անունն է «Լրաբեր»: մի համեստ անուն: Թերթը անկուսակցական է, պրօգրեսիւ ուղղու-

թեամբ: Ահա այդ այդպէս լինելուց յետ իմ և ընկերներին կողմից խնդրում եմ յատուկ քո աջակցութիւնը, գլխատրապէս ջերմ աշխատակցութեամբդ, որը պիտի կայանայ թէ բանաստեղծութիւններովդ և թէ յօդածներովդ գրական բովանդակութեամբ: Շատ գոհ կլինէիք, եթէ միւթ տայիր բանասիրական բաժնի համար, որպէս աւելի կարևոր և պատասխանատու բաժին, որի համար շատ քչերն ունենք միւթ մատակարարող: Թոյլ եմ տալիս մատնացոյց անել երկու միւթի վրայ, նախ – Շահազիզ, որպէս քեզ շատ մօտ անձնատրութեան և նրա մահուան տպատրութիւնը դեռ ևս շատ թարմ և երկրորդ միւթը - Լէօի նշանակութիւնը մեր գրականութեան մէջ: Իհարկէ համառօտ, ամփոփ. մի կամ երկու բանասիրականի միւթ, և մենք իհարկէ ամենայն սիրով կտպագրենք. իսկ այս միւթերից դուրս ընտրութիւնը քեզ եմ թողնում, որքան հետաքրքիր և Աստրախանի կեանքին մօտ, այնքան լաւ: Յոյս ունեմ, առանց արձագանք տալու մեր այդ բարեմիտ ձեռնարկութեանը չես կարող մնալ, մանաւանդ որ այսօր Աստրախանը իր առաջին և անվստահ քայլերն է անում դէպի յոյսը, դէպի արթնացումը և մանաւանդ Աստրախանին ամենամօտ ապրող գրչուզէն զինորներից մէկը դու ես. ուրեմն շտապիր քո սիրած ասպարէզը, որպէսզի ընդհանուր ոյժերով կարողանանք մի փոքրիկ յոյս անգամ մատակարարել այդ կտրուած, խաւար, յետ մնացած հայ գաղթավայրին:

Առ այժմ գործը սկսում ենք առանց կոպէկի, յոյսներս դրել ենք բաժանորդագրութեան վրայ: Եթէ հնար ունես, քո շրջանումդ բաժանորդներ գտնել, աշխատանքդ մի խնայիր. իր ժամանակին կուղարկեմ անդորրագրեր: Յոյս ունեմ շատ և շատ կուրախանաս մեր ձեռնարկութեան առիթով և քո եռանդուն ու ստէպ մասնակցութեամբդ զօրավիզ կլինես մեր համեստ, փոքրիկ ոյժերին վստահութեամբ առաջ տանելու լրագրական պատասխանատու և դժարին գործը: Գուցէ և ծանօթներիդ մէջ կգտնես և այլ մասնակցող ոյժեր. դրա համար ևս նախապէս յայտնում ենք մեր շնորհակալութիւնը: Նամակս ստանալուդ պէս իսկոյն խնդրում եմ միւթ ուղարկես՝ կամ արձակ կամ բանաստեղծական. ցանկալի է, որ հէնց առաջին համարին դու միւթ տուած լինես: «Լրաբեր»-ը յոյս կտեսնի մարտի 15-ից ոչ առաջ: Այդ չափ առ այժմ բաւ համարելով, անհամբեր սպասում եմ միւթերին իմ հասցէին ուղղուած - Григоріанская ул. дом арм. Богодельни, священнику Г. Мкртумьянц.

Յարգանացս ողջոյնները Տիկնոջն ու օրիորդին
մնամ Զո Գ. քահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ

7. ԱԼ. ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

*Խմբագրութիւն «ԼՐԱԲԵՐ»
Շարաքարքերի
19 յունիսի 1908 թ.
Աստրախան*

*Редакция
армянской еженедельной
газеты "Лраберь"
Астрахань*

ՍԻՐԵԼԻ ԱՂԷԶՍԱՆԴԻ

Իմ աշակերտներից մէկը՝ Յարութիւն Գարիբեան, որ այս տարի աւարտել է մեր գիմնազիան, գալիս է Մոսկւա համալսարան մտնելու: Որովհետև դեռ շատ

քաշող ամօթխած տղայ է և միևնոյն ժամանակ հարկատրութիւն կլինի երաշխատրելու նրա անձի մասին, ուստի խնդրում եմ, առանց տատանման հովանաւորելու դրան և օգնութիւն ցոյց տալ: Գիտեմ, որ շատ զբաղւած ես, բայց գործի կարևորութիւնը ստիպում է ինձ, դիմել քեզ և քո օգնութիւնը հայցել: Նամակս գրում եմ շտապով, ուստի մանրամասնութիւնների չեմ դիմում:

Սպասում եմ բանաստեղծութիւններիդ և թղթակցութիւններիդ «Լրաբերի» համար:

Տիկնոջը տեսայ հարևանցիօրէն շոգենաւի վրայ գալու թոպէին, երբ ես էլ Յարիցին էի ճանապարհում, այնպէս որ մանրամասնութիւններ հաղորդել չեմ կարող:

Ընդունի՛ր այլև
ՔՈ ՏԵՐ ԳԵՈՐԳ

8. ԱԼ. ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

23 յուլիսի 1908 թ.
Աստրախան

ՄԻՐԵԼԻ ԱՂԷՔՍԱՆԴՐ

Երևի այն ոտանաւորների մասին ես ասում, որ տպագրուեցին «Լրաբերի» վերջին 13-րդ համարում: Ուշացնելուս պատճառն այն էր, որ ուզում էի բանասիրականի բաժնում տեղաւորել, բայց յարմար բանասիրական չեղաւ, ուստի ստիպւած էի վերին սինակում տեղաւորել: Միթէ կարող էի անտես անել քո ոտանաւորները. միակն ես համարեա, որ տաւծդ խօսքի համաձայն աջակցում ես: Ինչպէս կարող եմ կենդանութիւն ներշնչել «Լրաբերին», քանի որ մենակ եմ մնացել բանիս բուն մտքով: Ես խմբագրում եմ և սրբագրում և թարգմանում, մինչև անգամ փաթաթում ու փոստ տանում: Խոստումներ տող շատ եղան, բայց մատ մատի խփել չեմ ուզում, ո՞ւմ ստիպես, մանաւանդ երբ ձրի է աշխատանքը: Խնդրում եմ անուշադիր մի թող եթէ հնարաւոր է, ուղարկիր քննադատական յօդւածներ ներկայ գրական բանաստեղծական ուղղութիւնների վերաբերեալ եթէ ռուս լրագրերում լաւ յօդւածներ կպատահեն, այդ համարները գոնէ ուղարկիր, այստեղ թարգմանել կտամ:

Շատ և շատ ցաւում եմ, որ տիկնոջ հետ չկարողացայ առանձնապէս պատահել, խօսել և ասելիքներս քեզ հասցնել: Այո, դժար է, երբ մարդ ասպարեզի վրայ միայն է:

Յարգանքներով քո ՏԵՐ ԳԵՈՐԳ

9. ԱԼ. ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

13 մայիսի 1910 թ.
Աստրախան

ՄԻՐԵԼԻ ԱՂԷՔՍԱՆԴՐ

Ստացայ յօբելեանական նւերներդ (երկու պոստ-կարտը), որը շտապել էիր ուղարկել Թամանշեան գոյգի հետ: Այն երեկոյին երբ պատահեցի յիշածս գոյգին,

մօտ երկու ժամ մեր խօսակցութեան նիւթն ու կենտրոնը դու էիր. քո յօբելեանի շուրջն էր պտտում մեր խօսակցութիւնը և այդ սիրատուն գոյգի ոգևորած պատմութիւնները մեծ ախորժանք պատճառեցին ինձ: Հաւատա, բարեկամ, բառ չեմ գտնում սրտիս ուրախակցութիւնը քեզ յայտնելու, որ յօբելեանդ այնքան յաջող է անցել. անկեղծ ասում եմ, քո քնարը արժանի էր այդ մեծարանքին և թող մա այսուհետև արեւի ուժգին հնչէ իր գեղգեղանքները: Քեզ թող ետանդ ներշնչէ այն գիտակցութիւնը, որ գնահատում ես, և գնահատութեան չափը տուող քո տաղանդը գնահատողների այն անկեղծ բանակն է, որ ցրած ապրում է քո երգած վշտի ու ողբի վայրերում: Թող լոեն ոսկու-սֆինքսները: Թող փակեն քո առաջ գրասենեակների մեղսարկու դռները, դու ապրում ես հայ ժողովրդի սրտում և դրանում պիտի գտնես քո յաղթանակը և այդ քո հպարտութիւնն է: Հրճիր ու ծիծաղիր: Քո քնարով քո հակառակորդ՝ մեծարանք ու հպարտութիւն պահանջող, թշուառ կուրքերին խորտակեցիր և հաւատա, որ նրանք այսօր ամօթահարւած են: Վայ յաղթածներին, պատիւ յաղթողներին:

Պոստ-կարտերդ երկուսն էլ յաջող են, մանաւանդ հայ ուսանողութեանը:

Կարծում եմ, որ մեզնում ևս հետաքրքրութիւն առաջ կբերեն դրանք, ուստի արելովդ չէր լինի, եթէ իւրաքանչիւր հրատարակութիւնից 25-ական օրինակ ուղարկել տայիր իմ հասցեով, ծախածի գումարը իսկոյն կուղարկեմ քեզ:

Այսօր գնեցի և կարդում եմ «Գարուն» արձանախոս: Դեռ բոլորը չեմ վերջացրել. տպատրութիւնը շատ գոհացուցիչ է: Երանի թէ մեր անտարբեր, մախիթ ժողովուրդը հնարատրութիւն տար այդպիսի գեղեցիկ հրատարակութիւնների պահպանութեանը: Սակայն երևում են և թերութիւններ, որոնք անշուշտ են և ժամանակին կուղղեն: Ներսէն սպրդել տառասխալներ, երեսի ծաղկանկարը թէև Մ. Սարյանին է, բայց արեւի աղբատիկ է քան ռուսական արձանախոսներինն է և երրորդ՝ ինչպէս առաջին մամակումս էլ գրել էի – մկատում է անունների ետևից ընկնելը. Ահարոնեան, Փափագեան, Շանթ և այլն, օրինակ ձեզ՝ «Օմար Խայամի վեճը Աստծու հետ» Ա. Իսահակեանի: Ի՞նչ է ուզում ասել հեղինակը և ի՞նչ գեղարուեստական նրբութիւն ու ճաշակ կայ. բայց ով կարող է համարձակել չընդունել այդ նիւթը, քանի որ յայտնի, անուն հանած Ա. Իսահակեանի գրչին է պատկանում: Երկրորդ փաստը Սիմ. Բազեանի ռտանատրն է. «Արևելքի սրմունջները»: Չգիտեմ, կամ չափազանց բանաստեղծական է կամ իմ խելքս չի հասնում. ոչինչ չհասկացայ: Բայց և այնպէս դրանք դեռ շատ թոյլ փաստեր են արձանախոս գրական արժանիքը ստորացնելու: Մի կարծիք, որ ես նեղացած եմ ուստի և այդպէս եմ դատում. հաւատա, ազնիւ բարեկամ, ոչինչ դեմ չունիմ, որ իմ գրածքները չեն ընդունում, բայց երբ Մ. Բազեանի մնացած գոհարներ են լոյս ընկնում, մի քիչ վիրաւորական է դառնում: Մանաւանդ վիրավորական է այն անուշաղբութիւնը, որ լոութեամբ են պատասխանում: Շատ լաւ, չի տպում, թող գրողը պատճառն իմանայ, թող իր սխալն ուղղէ. դու իբրև գրող շատ լաւ կիմանաս՝ և կզգաս, որ այդ գրածքները անքուն գիշերների, երկունքի ու յոյզերի արդիւնք են, հետևապէս հեղինակի անյայտութեամբ ու անծանօթ լինելով մի փութկոտ վճռով չպիտի մեղցնել և ոչնչութեան մատնել նրա վաստակը. հե՛նց այդ մոնօպոլիան է, որ մեր գրական հրապարակի վրայ նոր մարդիկ առաջ չեն գալիս և որոնց մէջ էլ մի փոքրիկ կայծ կայ, այն էլ չի գնահատում ու առաջ չէ քաշում: Ինչևիցէ. երկու անգամ է գլուխդ ցաւացնում եմ: Բայց և այնպէս խնդրում եմ իմանալ, ինչու իմ երեք ռտանատրներն ևս չընդունեց. իսկ եթէ ժամանակ չես ունենայ, մի նեղանար, առանձին կարևորութիւն էլ չկայ: Դարձեալ կրկնում եմ անցեալ խնդիրս Խալաթեանի գրքի առիթով. պատուիրիք ում հարկն է՝ պատուիրւած կանխավճարով ուղարկել ինձ. այդ աշխատութիւն

նը ինձ շատ հետաքրքրում է, մանաւանդ, որ կազմած է նոր ուսումնասիրութիւնների վրա հիմնած: Դէ գրութիւն - ջերմ յարգանքներով

Գ. քահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ

10. ՀՈՒՅՍ ՍՏԵՓԱՆՆՈՍՅԱՆԻՆ

*20 հոկտեմբերի 1911 թ.
Աստրախան*

**ԱԶՆԻՒ ՏԻԿԻՆ
ՅՈՅՍ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ**

Այս օրերս անսպասելի կերպով կարդացի լրագրերում, որ սիրելի բարեկամս՝ Ա. Ծատուրեանը լուրջ կերպով տկարացել է: Այդ անախորժ լուրը ծանր տպաւորութիւն թողեց վրաս, ուստի շտապում եմ գրել ձեզ և ճիշտ տեղեկութիւններ խնդրել Ձեզնից հիւանդութեան տեսակի և ընթացքի մասին: Ներեցէք, որ Ձեր քանկագին ժամանակը կիսելն իմ խնդրով, սակայն յոյս ունեմ, որ չէք մերժի խնդրիս բաւականութիւն տալ: Այդ հասարակ հարցասիրութիւն չէ, այլ աւելին, որ ապացուցանում է թէ՛ բանաստեղծը ապրում է իրեն յարգողների սրտում: Չեմ կասկածում, որ Դուք ևս Ձեզ յատուկ հոգատարութեամբ կխնամէք քանկագին հիւանդին և Ձեր կարեկից վերաբերմունքով կթեթևացնեք նրա ցաւերը: Այո, հեց այնպէս, ինչպէս որ երբեմն մադամ Վիարդօն պահապան հրեշտակ հանդիսացաւ իր մեծ արքորական և քանկագին հիւր – տաղանդաւոր Տուրգենեւիին: Դուք ևս այդպիսի մի պահապան հրեշտակ հանդիսացէք սիրելի Աղէքսանդրի համար, յուսադրէք և քաջալերեցէք նրան, որ ցաւի և տքնանքի ժամերին քաջութեամբ ու համբերութեամբ տանի հիւանդութեան դառը բաժակը: Եւ հաւատացէք, այդ է իսկական, մտերիմ բարեկամի ուղիղ պարտականութիւնն ու անձնւիրութիւնը – օգնել ու խնամել ընկերին այն օրհասական թուլեւորին, երբ մի փոքրիկ յապաղումն, մի թեթև անուշադրութիւն կամ անտարբերութիւն կարող է շատ ծանր հետևանքներ ունենալ: Արեք, ինչ որ հնար է, որպէսզի շուտ միջոցում մենք ևս հնար ունենանք սիրելի Աղէքսանդրին ապաքինւած տեսնել, իր անգուգական քնարը ձեռքին, իր վիշտը երգելիս և մեզ միսիթարելիս:

Ջերմաջերմ ողջոյններ և անկեղծ սրտի յարգանքներ սիրելի Աղէքսանդրին. թող Ամենագօրը զօրացնի նրան՝ յաջողութեամբ մաքառելու մեր կեանքի ամենագաղտնի և ամենայնառ թշնամու – հիւանդութեան հետ և ջախջախելու նրան:

Անկեղծ յարգանքներով առ ձեզ
Մնամ Գեորգ քահանայ ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ

Իմ հասցէն՝ Астрахань, Григоріанская ул., домъ армянской Богадельни, священнику Г. Мкртумьянц

ՄԻՐԵԼԻ ԱՂԷՔՍԱՆԴՐ

Տեղեկացայ էմ. քահ. Նազարեանի մահուան մասին: Մահը մի արժանատոր հովիւ էլ խլեց իր հօտից: Մենք ևս՝ հոգևորականներս կորցրինք անշուշտ մի շիտակ, ազնիւ և աշխատասեր պաշտօնակից: Մեր դասակարգի մէջ այդպիսիները շատ չեն. ուստի կորուստը զգալի պիտի համարել: Այս այսպէս լինելով հանդերձ հանգուցեալի տեղը բաց է մնում:

Գիտեմ, որ այդ տեղի վրայ թեկնածուներ շատ պիտի լինեն: Առաջին տեղը տալիս եմ ես տեղիդ Արսէն սարկաւազին: Անշուշտ առաջին թեկնածուն եմ համարում, որովհետև տարիներ շարունակ ծառայում է Մոսկւայի եկեղեցում և հերթի է սպասում: Երկրորդ. այսքան տարի ծառայելով, երևի մի որոշ դիրք է ստեղծել իր համար և իր համակրողներն ունի: Սակայն ինձ ասում են, որ յիշեալ սարկաւազը առանձին հաճակութիւն չէ վայելում տեղիդ հասարակութեան մէջ և ինձ խորհուրդ եմ տալիս՝ իմ թեկնածութիւնը դնել այդ տեղի համար:

Ուղիղն ասած՝ դժարանում եմ այդ քայլն անել վերև յիշածս պատճառով, այսինքն՝ սարկաւազի պատճառով, ուստի դիմում եմ Ձեզ և խնդրում եմ, շուտ միջոցում մի քանի մանրամասնութիւններ հաղորդել ինձ այդ հարցի առիթով:

1. Վճուռ՞ է արդեօք, որ անպատճառ Արսէն սարկաւազը պիտի ձեռնադրի Մոսկւայի համար:

2. Մոսկւայի ծխական ժողովում թեկնածուների հարց դրելու՞ է թէ ոչ:

3. Եթէ բացի սարկաւազից այլ թեկնածուներ լինելու են, **արդեօ՞ք խորհուրդ կտայիք, որ ես իմ թեկնածութիւնը դնեմ:**

Ուղիղն ասած՝ առանց Ձեզ ես ոչ մի քայլ չեմ անի, քանի որ եթէ թեկնածութիւնս դնելու էլ լինեմ, գլխաւոր յոյսս Դուք, յարգելի տիկինը և Ձեր մտերիմների շրջանը պիտի լինեն: Առանց Ձեզ, համոզւած եմ, ոչ մի յաջողութիւն չպիտի ունենամ:

Միրելի բարեկան, պ. Աղեքսանդր, արդեօք յարմար չէիք դատի, Ձեր սեղմ շրջանում իմ վերաբերեալ հարց դնէիք և որոճայիք, թէ ես արդեօք յարմար կլինէի Մոսկւայի համար: Կարծեմ, եթէ Ձեր շրջանը համոզուեց իմ պիտանիութեան մասին, կարող է ժողովում հարցը պաշտպանել: Քանի որ Դուք, Մամիկոնեանը, Կուսիկեանը և այլք այնքան համակրութիւն և ոյժ էք վայելում, որ կարելի կլինէր ձայների մեծամասնութիւնը տանել, թէև ունեն հակառակորդներ, ինչպիսիս են Բարխուդարեան. Ն. Միրդաշուր և տեր Յարութիւն Պապովեան:

Ուղիղն ասած ես վաղուց երազում եմ հեռանալ Աստրախանից, այդ նեխուած ճահճից, քարացնող անշարժութիւնից և ինձ համար ամենայարմարը, Տիխիսից յետոյ, համարում եմ Մոսկւան, ուր հայ մամուլ, գրական շրջան և ուր եռում է կեանքը:

Այժմ՝ հարց, որքան յարմար կլինեմ Մոսկւայի համար: Չասեմ, որ առաջնակարգ տեղ կբռնեմ, սակայն վերջինն էլ չեմ լինի: Որպէս Աստրախանի քահանայ եկեղեցական կարգ ու արարողութիւններին քաջ տեղեակ եմ: Գիտեմ ներկայ պահանջներին, որպէս քահանայ, կարող եմ բաւականութիւն տալ, քարոզելով, կրօնի ու լեզուի դասեր ւաւանդելով: Չայնս յաջող է և յամարձակում եմ յիշեցնել, որ մի քիչ էլ գրիչ շարժել գիտեմ, որի զարգանալուն քիչ չէր նպաստի և Մոսկւան:

Ահա, սիրելի եղբայր, Ձեր առաջ դրած է իմ ապագան: Եթէ հնարաւոր է, գոնէ այս անգամ օգնեցէք ազատել ինձ խեղդող մթնոլորտից: Հաւատացած եղէք, որ կաշխատեմ արդարացնել Ձեր յոյսերը:

Մի բան էլ եմ մտածել: Եթէ անպայման վճռած է, որ սարկաւագը լինի քահանայ, արդեօք յարմար ժամանակ չէ՞ երրորդ քահանայի հարց բարձրացնել, մանաւանդ որ այդ հարցը կար ձեր մթնոլորտում և Մոսկւայի հայ գաղութի անդամների թիւը օրեցօր աւելանում է և նամանաւանդ որ տէր Յարութիւնը ծերացել է: Այդ ձևով էլ կարելի էր իմ հարցին մօտենալ:

Այսպէս թէ այնպէս, սիրելի բարեկամ, եթէ մի աղօստ յոյս կայ, գրեցէք ինձ և ինչպէս վարուելու մասին նոյնպէս գրեցէք: Ինձ շատերը ձեզ մօտ ճանաչում են. միայն ժողովում պիտի առաջ քաշել այնպիսի մարդիկ, որոնք իմ օգտին խոսան և ինձ պաշտպանեն: Խնդրիս կարող է օգնել գուցէ նաև Վահան Տօտոնեանցը, Խաչատրեան իրաւաբանը, դրանք ինձ լաւ ճանաչում են և իմ ոյժին էլ լաւ ծանօթ են:

Միրելի Աղէքսանդր, համոզուած եմ, որ եթէ հնարաւոր է, Դուք չէք զլանայ ջանք գործ դնել Ձեր հարազատ ընկերների հետ միասին, գոնէ այս անգամ ազատել ինձ անյայտ կորչելուց այս մոնգոլների անապատում: Ինձ այստեղ հասկացող չկայ: Ես այստեղ մի անպետք ոյժ եմ դատապարտած ժամգոտուելու և առանց օգուտ տալու ոչնչանալու, ի սէր Աստծոյ, հանեցէք ինձ այստեղից: Առայժմ ցգրութիւն: Յարգելի տիկնոջը իմ անկեղծ յարգանքները: Ձեր յուսադիր նամակին անհամբեր սպասելով՝

մնամ Ձեզ անկեղծ յարգող
Գ. քահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՅ

12. ԱԼ. ԾԱՏՈՒՅԱՆԻՆ

1 նոյեմբերի 1913 թ.
Աստրախան

ՄԻՐԵԼԻ ԱՂԷՔՍԱՆԴՐ

Վերջապէս որոշեցի և այսօրայ փոստով ուղարկեցի խնդիրս Մոսկւայի հայոց եկեղեցական խորհրդին: Գրում եմ փոստում, ուստի շատ բան չեմ կարող գրել – խոստանում եմ շուտով մանրամասն գրել: Յամենայն դէպս աշխատեցէք հնար եղածին չափ: Գիտեմ ամենքդ զբաղուած էք, սակայն բաւական է, որ իւրաքանչիւր անգամ իրար պատահելիս, ինձ ևս՝ մեղապարտիս յիշէք, իմ անունս արծարծէք ծանօթների շրջանում, այդ ևս գործի յարթանակի կէտն է, որովհետև թեկնածուի անունը որքան շատ է տրուում, այնքան էլ նա ժողովորդականանում է: Կարծեմ, որ այդ խնդրում Դուք ևս համոզուած կլինէք: Նայեցէք ինչ են անում հակառակորդները. փողոցում, հրապարակներում, լրագրութեան մէջ պոռում են իրենց կանդիդատների անունները, սևացնում են իրենց ախտյաններին, իսկ մերոնք դեռ մտածում են, դատում են, ծանրութեթև են անում: Գիտես հայկական առածը. «Մինչև խելօքը կմտածէր, գժի տղան շուկայ հասար»: Դարձեալ կրկնում եմ՝ ասպարէզի վրա եղածներից եթէ առաւել չեմ, պակաս չեմ և յոյս ունեմ դրանց դիմաց Ձեզ ամօթալի չեմ բողմի, եթէ յաջողեց: Ըարժեցէք Ժամհարեանների, Շորշորեանների ու Տարասեանների շրջանը, վերջին երկուսը փոքր ի շատ ինձ գիտեն:

Յարգանացս ողջոյնը տիկնոջը, ծանոթներիս:

ԶՈ ՏԵՐ ԳԷՈՐԳ

ՍԻՐԵԼԻ ԱՂԷՔՍԱՆԴԻ

Ներիր, որ ուշ եմ պատասխանում նամակիդ: Սկիզբը քննութիւնները արգելք եղան, յետոյ էլ կարծեցի, որ արդէն ամարանոցում կլինէք, ուստի յետաձգեցի մի այլ յարմար ժամանակի. սակայն երբ երէկ Սարգիս Խաչատրեանից լսեցի, որ դեռ Մոսկայումն էք, ուստի գրում եմ:

Այո, սիրելի բարեկամ, ինձ էլ ճնշում էր այն հանգամանքը, որ քո այցելութիւնը Աստրախանին մեր մամուլի մէջ տեղ չգրաւեց և ամեն բոպէ, ամեն ժամ անիծում էի ինձ, ինչու համաձայնութիւն տւի Բժշկեանին, որ նա գրի «Մշակ»-ին, և ինձ այնպիսի նեղ դրութեան մէջ էի գգում, որ հէնց քո նամակը ստանալուս առաւօտեան արդէն ես գրել էի Նոր-Նախիջևանի «Գաղութ»-ին և համարեա միշտ հարցնում էի Բժշկեանին՝ գրե՞լ է արդեօք, երբ է գրել: Իհարկէ այժմ ես, ինչպէս և դու, յոյս ունեմ, հանգստացած կլինես, որովհետև հանդէսի նկարագրութիւնը տպագրուեց «Մշակ»-ում և «Գաղութ»-ի համար 16-ում: Եւ եթէ յիշում ես, «Մշակի» համարներից տպագրուեց «Յօրելեանը» վերնագրով իմ մի գրածքը: Այդ գրածքը ես նւիրել էի քո Աստրախան գալու յիշատակին. սակայն ինչու այդ տողերը խղմբագրութիւնը հանել էր, չկարողացայ հասկանալ: Վերջապէս՝ շատ ուրախ եմ, որ այդ անհանգստութիւններս (քոնը և իմը) փարատեց: Ես նամակդ ստանալուց յետո՛ իսկոյն մի բացիկով յիշեցրի պ. Վրույրին ևս իր խոստումը, սակայն չգիտեմ, ինչու մինչև օրս «Հորիզոն»-ում ոչինչ չտպագրուեց: Բայց և այնպէս թէև դու մեզմից հեռացար, թէև Աստրախանի բանձրասանքից ազատեցիր, սակայն քո գալ գնալու հետևանքները մինչև օրս Դամոկլէսի սուրի նման կրում ենք գլխներիս: Չես կարող երևակայել, որ այն չարաբաստիկ «աֆտօմօբիլայիսի հարցը» մինչև այս օրս պ. Աստուածատրեանը մատին փաթաթան է շինել և չի հանգստանում: Էլ մարդ չքողեց, էլ եպիսկոպոս, էլ վաճառական, որ ճարում ճար ունենար, Դրդների չղիւրը կընկներ, հաղորդելու, որ իրեն չնստեցրին, որ ինքը որպէս ընկերութեան նախագահ անպատուած է «Բանաստեղծի բարեկամների» կողմից (ես, Քարտաշեան, Չուրաբեան) և այլն, և վերջապէս այդ բոլորի թագն ու պսակն այն եղաւ, որ ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովում 15 անդամների ներկայութեամբ նորից «աֆտօմօբիլայիսի» հարցը բարձրացրեց և իմ բացակայութեամբ ինձ սևացնել տուեց պ. Աստուածատրեանը: Ահա, ասում ես, որ գնահատեմ գործը, ներեմ այդ ապիկարներին և աշխատեմ այդ ընկերութեան համար: Դիշտն ասեմ, հենց իմ ներողամտութիւնը երես տուեց այդ լակոտներին, իմ լուծութիւնիցն էր, որ նրանք օգտուեցին: Բայց այս անգամ ստիպուած եղայ լրագրական ասպարէզ դուրս գալ և դեռ մեղմ կերպով ամենին իրենց տեղերը ցոյց տալ և մինչև այսօրս ծակամուտ են եղել և չեն պատասխանում յօդուածիս: Թող պատասխանեն, ես դեռ ասելիքս չեմ վերջացրել: Նամակիս հետ ուղարկում եմ վերջին օրերս լոյս տեսած տեղական մամուլի թերթերը, ինքդ անձամբ կկարդաս և կգնահատես մեր գաւառական-գրական գործիչներին և կհամոզուես՝ ինչ դիտաւորութիւններով մարդիկ գործի գլուխ են անցել:

Շնորհակալ եմ հեռագիրս Խորէն եպիսկոպոսին հասցնելուց մասին. հետաքրքիր է, ի՞նչ տպատրութիւն ասեց եպիսկոպոսը: Գրում ես, որ իմ թեկնածութիւնս ևս դուած է, ուղիղն ասեմ ինձ ևս մուծել են ընտրելի քահանայացուների մէջ:

Այժմ գիտեք, ինչ է մնում Չեր կողմից անել իմ հարցը յաջողեցնելու համար: Այն, որ Դուք շատ ձայներ հաւաքեք ժողովի օրոյս համար: Չեր ամենամեծ ծառայութիւնը այդ պիտի լինի, ուրիշ ոչինչ չէ մնում. ո՛չ կռիւ, ո՛չ դալմադալ, այլ քէներ, եթէ իհարկէ ինձ ցանկացողները հարկ կհամարեն: Խոստացածս նամակը այս օրերս կգրեմ նաև Ս. Մամիկոնեանին: Իմ խորին յարգանքներիս հաւաստիքը մեծ տիկ. Հաւատիմ: Մերոնք խորին յարգանքով ողջունում են Չեր երկսին: Խնդիրս նոր ուղղութիւն ստանալու դէպքում չեմ կասկածում, որ մի երկտողով կծանուցանես, ուր կլինես ամառը:

Խորին յարգանքներով քո Գ. քահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՅ

Յ. Գ. ապահոված ուղարկում են «Астраханский листок»-ի համար 124 և 130-ը, իսկ «Астраханец»-ի համար 313-ը. երեք համարումն էլ տպագրածները կարդա, կարմիր մատիտով նշանակել են:

Գ. քահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՅ

А. Г. ЗАКАРЯН - Письма священника Геворга Мкртумянца. - Астраханский армянин, публицист, педагог, общественный деятель Геворг Мкртумянц в письмах, адресованных Ал. Цатуряну, пишет о тяжелых условиях жизни армян колонии, о культурной жизни и особенно о своем тяжелом и мучительном душевном состоянии. В то же время сообщает о разработанных им программах и практических средствах по улучшению положения армян колонии, ожидая от любимого поэта полезных советов, соответствующей помощи и поддержки.